

# ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՍԾՈՒ ԽՈՍՔԻՑ

Ապրել արտակարգ. կյանք  
Մաս 3 (5-ից)

Որովհետեւ Տերն է տալիս իմաստությունը ... Որովհետեւ իմաստությունը կմտնի քո սիրտը, եւ գիտությունը ախորժեղի կլինի քո հոգիին: Երանի այն մարդին որ իմաստութիւն է գտել! Իմաստութեան սկիզբն է՝, «իմաստութիւն ստացիր»: Դու գնալիս՝ քո քայլերը պիտի չնեղուին, եւ վազելիս չես գայթակղուիլ:  
**Առակաց 2-6, 10; 3:13; 4:7, 12**

## ԱՍԾՈՒ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (ԽՈՍՔԸ) ԿԱՐՈՂ Է...

### ● Ամրապնդել ՅԱՎԱՏՔԴ

Եւ հիմա՝ ձեզ Աստուծուն եմ հանձնում, եղբարք, եւ նրա շնորհքի խոսքին, որ նա կարող է շինել՝ եւ ամեն սրբվածների հետ ձեզ ժառանգություն տալ: **Գործք Առաքելոց 20:32**

### ● Առաջնորդել ՈՐՈՇՈՒՄՆԵՐԴ

Քո խոսքը ճրագ է իմ ոտների համար, եւ լույս իմ ճանապարհի համար: **Սաղմոս 119-105**

### ● Բարելավել ԿՅԱՆՔԴ

Այս օրերնքի գիրքը քո բերանիցը չ'հեռուանա, այլ գիշեր եւ ցերեկ նրա վրա մտածես, որ պահես եւ կատարես բոլոր նրա միջի գրվածի պես որովհետեւ այն ժամանակ ճանապարհները **հաջողակ կ'անես**, եւ այն ժամանակ **խելամուտ կ'լինես**: **Յեսու 1:8**

### ● Փոխել ՍԻՐՏԴ

Որովհետեւ Աստուծո խոսքը կենդանի է եւ զորավոր եւ ամեն երկսայրի սուրից ավելի կտրուկ է, եւ թափանցում է մինչեւ շունչի եւ ոգու եւ հոդերի եւ ծուծի բաժանվելը. եւ քննող է սրտի մտքերը եւ խորհուրդները: **Եբրայեցիս 4:12**

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆ---ԾԱՆՈԹԱՑՈՒՄ---ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԻՈՐԵԼՈՎ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԴԱՐՁՆԵԼ ԱՍԾՈՒ ԽՈՍՔԸ

### 1. ԽԱՆԴՎԱՌՈՒԹՅԱՄԲ մոտեցիր խոսքին

Նորածին երեխաների պես ցանկացեք այն բանավոր անխարդախ կաթին որ նրանով աճեք [դեպի փրկությունը]. **1 Պետրոս 2:2**

### 2. ՅԵՏԵԻՂԱՎԱՆՈՐԵՆ փորձարկիր այն

Բայց սրանք ավելի ազնիվ էին քան թե նրանք՝ որ Թեսաղոնիկեումն էին. Որ խոսքը բոլոր հոժարությամբ ընդունեցին. ամեն օր Գրքերը քննում էին, թե այս այսպէ՞ս է:

### Գործք 17:11

Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի մեջ չի գնում, եւ մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում, եւ ծաղր անողների աթոռի վրա չի նստում. Այլ նրա կամքը Տիրոջ օրենքի մեջ է, եւ ցերեկ ու գիշեր նրա օրենքի վրա է մտածում: Եւ նա ջրերի գնացքումը տնկված ծառերի պես է, որ իր պտուղը տալիս է իրան ժամանակին, եւ նրա տերերը չի թափվում, եւ ամեն ինչ որ անում է հաջողվում է նրան: **Սաղմոս 1:1-3**

### 3. Քննարկիր այն ԱՅԼՈՑ հետ

Եւ այս խոսքերը, որ ես այսօր քեզ պատվիրեցի, քո սրտի մեջ լինեն: Եւ կրկնիր նրանք քո որդկանցը, խոսիր նրանց վրա քո տան մեջ նստած ժամանակդ եւ ճանապարհ գնացած ժամանակդ, եւ պառկելիս եւ վեր կենալիս. **2 Օրինաց 6:6-7**

### 4. ԱՆՄԻՋԱՊԵՍ գործի դիր այն

Բայց խոսքը անող եղեք, եւ ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով: Վասնզի եթե մեկը միայն խոսքի լսող է եւ ոչ անող, նա նման է այն մարդին որ պշուցած մտիկ է տալիս իր իսկական երեսին հայելու մեջ. Որովհետեւ նայելով տեսավ իրան եւ անցավ, եւ շուտով մոռացավ թե ինչպես էր: **Յակոբոս 1:22-24**

Շատ խաղաղություն կա քո օրենքը սիրողների համար. եւ գայթակղություն չկա նրանց համար: **Սաղմոս 119:165**

Հաջորդ Քարոզի Թեման  
**ԿՅԱՆՔՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՅԱՎԱՏՔՈՎ**  
Հովիվ Սարո Խաչիկեան